

ՊԵՏԱԿԱՆ ԸՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԵՏԶ

Քանի մը շաբաթ տարածուած տարածայնութիւններէն եւ շշուկներէն ետք, Կրթութեան նախարարութեան ընդհանուր տնօրէնի պաշտօնակատար Իմատ Շուքէյր երէկ պաշտօնապէս հրապարակեց պետական ընկերութիւններուն ժամանակացոյցը: Նախարարին ստորագրութիւնը կրած յայտարարութեան մէջ կը նշուի, որ միջնակարգի (պրեօվէ) պետական ընկերութիւնները տեղի պիտի ունենան չորս յաջորդական օրերու ընթացքին՝ 24-27 Յունիսին, իսկ երկրորդականի (պաքալորիա) ընկերութիւնները պիտի տեսնեն հինգ օր՝ 29 Յունիսին եւ 1, 2, 4 եւ 5 Յունիսին:

ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՐԱՆԱԶԳՈՒԹԻՒՆ

Հակառակ քաղաքացայտական եւ թաղապետական ձգձգուած ընտրութիւնները անգամ մը եւս յետաձգելու յստակ մտադրութեան, ներքին գործերու նախարարի պաշտօնակատար Պասսամ Մաուլաուիի ստորագրեց Պէյրութի, Պեքաայի եւ Պաալպաք-Յըրմէիի բնակիչները ընտրութեան հրաւիրող օրինագիծը, որուն մէջ կը ճշդուի



Նաեւ իւրաքանչիւր քաղաքացայտական կամ թաղապետական խորհուրդի անդամներուն թիւը: Մաուլաուիի նշեալ որոշումին կցուած էր թեկնածութիւններ առաջադրելու ընթացակարգը բացատրող յայտարարութիւն մը: Ըստ այս որոշումին, նշեալ երկու շրջաններուն մէջ տեղական մարմիններուն ընտրութիւնը պիտի կայանայ 22 Մայիսին:

ԱՆՕՂԱԶՈՒԻ ԿՈՐԾԱՆՈՒՄ

Իսրայէլեան բանակի բանբեր Ալիխայ Ատրաիի հաստատեց, որ հարաւային Լիբանանի օդային տարածքին մէջ կործանուած է իսրայէլեան անօդաչու թռչող սարք մը՝ հակաօդային պաշտպանութեան հրթիռի հարուածով: Օդուծը ապա ըմբակոծեց այն դիրքը, ուրկէ արծակուած էր հակաօդային հրթիռը, պնդեց Ատրաիի, խոստանալով շարունակել գործողութիւնները Լիբանանի մէջ եւ չդադրեցնել անօդաչուներու թռիչքը՝ մինչեւ նպատակներու իրագործում: Իսրայէլեան կործակիչներ նաեւ թիրախներ հարուածեցին հարաւային Սուր գաւառի Սրիֆա եւ Արզուն շրջաններուն մէջ:

(Շար.ը տեսնել 4րդ էջ)

ՅԱԻԵՆԱԼ ՊԱՏԺԱՄԻՋՈՅՆԵՐ ԻՐԱՆԻ ԴԵՄ

Եւրոմիութեան արտաքին եւ անվտանգութեան քաղաքականութեան գերագոյն ներկայացուցիչ ժոզեփ Դորել յայտարարեց, որ Եւրոմիութեան անդամ պետութիւններուն արտաքին գործերու նախարարները որոշած են ըն-



դարձակել Թեհրանի նկատմամբ սահմանուած պատժամիջոցները՝ առ ի հակադարձութիւն իսրայէլեան թիրախներու դէմ քանի մը օր առաջ գործուած հրթիռային լայնածաւալ յարձակումին:

Իսկ Իրանի Արտաքին գործերու նախարարութեան բանբեր Նատր Զանասանի հրապարակեց Թեհրանի որ-



դեգրած քայլերը՝ Դամասկոսի մէջ Իրանի հիւպատոսարանի կործանումէն ետք: Ան նշեց, որ նախ փորձ կատարած է իսրայէլեան նշեալ գործողութեան հարցին լուծումը գտնել դիւանագիտական միջոցներով՝ դիմելով ՄԱԿ-ին եւ

(Շար.ը տեսնել 4րդ էջ)

ԽԱՂԱՂԱՊԱԿՆԵՐԸ ԱՅԼԵՄ ԳՈՐԾ ՉՈՒՆԻՆ

Ռուսերը Արցախէն հեռացան, որովհետեւ տարածաշրջանին մէջ անոնց համար գործառնոյթներ չէին մնացած: Այս մասին յայտնեց Ռուսիոյ նախագահութեան բանբեր



Տմիթրի Փետրով՝ աւելցնելով, որ այս հնարաւոր դարձաւ Ատրպէյճանի սահմանը ճանչնալու երեւանի որոշումի լոյսին տակ: «Այնտեղ փոխուած են աշարիաքաղաքական իրողութիւնները եւ խաղաղապահներուն պարտականութիւնները սպառած են», ըսաւ Փետրով:

Արցախի նախկին նախագահ Աշոտ Դուլեան կարծիք յայտնեց, թէ խաղաղապահներու հեռացումը անպայման չի նշանակեր ամբողջ զօրախումբին հեռացումը:

Նշեց, որ խաղաղապահները երէկ շարունակեցին դուրս գալ Արցախէն՝ Ատրպէյճանի եւ Հայաստանի վրայ: Գերմանական «Bild» թերթը նշեց, որ ռուս զինուորները գուցէ Արցախէն անցնին Ուքրաինա:

ՄԱՅՄԱՆԱԶԱՏՈՒՄԻ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունեց Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով Եւրոմիութեան յատուկ ներկայացուցիչ Թոյօ Զլաարը, որուն հետ



արծարծեց մասնաւորաբար իսրայէլեանական սահմանազատումի բանակցութիւններն ու գոյացած համաձայնութիւնները: Չորուցակիցները անդրադարձան նաեւ Հայաստան-Եւրոմիութեան զարգացող յարաբերութիւններուն՝ զանազան ոլորտներու մէջ: Քլաար Նոյն նիւթերը ընկարկեց նաեւ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի հետ:

Նոյն ժիրին մէջ, Արաբական Միացեալ Եմիրութիւններու Արտաքին գործերու նախարարութիւնը ողջունեց Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանազատումի համաձայնութեան յանգեալ որոշումը, աւելցնելով որ այդ կրնայ ամրապնդել երկխօսութեան կամուրջները եւ խաղաղութեան պարզեւել տարածաշրջանին:

ԿԱՐՏԻՆԱԼ ԱՂԱՃԱՆՏԱՆԻ ԱԾԻՒՆԸ ՊԻՏԻ ՓՈԽԱԴՐՈՒԻ ԼԻԲԱՆԱՆ

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. կաթողիկոս-պատրիարքը երէկ տեսակցեցաւ վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթիի հետ ու յայտարարեց, թէ Պատրիարքութիւնը կը պտրաստուի շուտով Լիբանան փոխադրելու կարտինալ Աղաճանտեանի աճիւղը: Միքաթի իր բոլոր հնարաւորութիւնները դրաւ պատրիարքութեան տրամադրութեան տակ՝ դիւրացնելու նշեալ գործողութիւնը: «Կարտինալ Աղաճանտեանի աճիւնը իր ծննդավայր՝ Լիբանան վերադարձը կրնայ ըլլալ ներքին վերականգնումի, խաղաղութեան եւ անդորրի ամրապնդումի հնարաւորութիւն», ըսաւ Միքաթի: Կաթողիկոս-պատրիարքը իր կարգին զնահատեց վարչապետի պաշտօնակատարին գործունեութիւնը: «Մենք կը հետեւինք Միքաթիի բոլոր քայլերուն եւ կը զնահատենք զանոնք», ըսաւ Ռաֆայէլ Պետրոս ԻԱ՝ պատրիարքը:



Հայ Բաղաքական Երեք Կուսակցութիւններ

109- Ամեակ Հայոց Ցեղասպանութեան

Բայլարշալ Զահերթ

Երեքշաբթի 23 Ապրիլ 2024 Երեկոյեան ժամը 7:00-ին

Պուրճ Համուտէն Անթիլիասի Մայրավանք

ՓՈԽԱԴՐԱԿԱՌՔԵՐԸ ԱՊԱՀՈՎՈՒԱԾ ԵՆ

Ստորեւ յիշուած շրջաններէն դէպի Պուրճ Համուտ կը մեկնին **ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԱՆ 6:00ԻՆ:***

- ՀՅԴ «Ազատամարտ» ակումբ, Էշրեֆիէ:
- ՀՅԴ «Տիգրան Ծամհոյր» ակումբ, Սար Մըխայէլ:
- Հայաշէնի ժողովրդային տուն:
- «Ա. Գեորգ» եկեղեցոյ դիմաց, Հաճըն:
- «Տխրունի» ակումբ Խալիլ Պատաուփ:
- ՀՄՄ Պէրոպ ակումբ:
- «Ա. Յարութիւն» եկեղեցոյ դիմաց, Խալիլ Պատաուփ:
- ՀՅԴ «Է. Ակնունի» ակումբ, Ֆանար:
- ՀՅԴ «Եւրոպ» ժողովրդային տուն, Ռաուտա:
- ՀՅԴ «Գ. Նժդեհ» ակումբ, Զալբա:
- Ռաուտայի ՀՄՄ ակումբ:
- «Անի» կեդրոն, Նահր Մոթ:
- «Արքայեան- ՀԱԸՄ» մարզամշակութային համալիր, Մըզիեր:
- Միմիթեան շէնքեր, Անթիլիաս:
- Ժիպէլի Հայ կեդրոն:
- ՀՅԴ «Ա. Ջէյթեան» կեդրոն, Այնճար:
- ՀՄՄ Անթիլիաս ակումբ:
- «Մասիս» ակումբ Պուրճ Համուտ:

*Գերագործը ապահովուած է Նոյն շրջաններուն ներստեալ Պուրճ Համուտ



Գինեձև՝ Եռահատորներու Չրատարակութեան Առիթով

ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ, ԳԻՏՆԱԿԱՆ-ԱԿԱԴԵՄԱԿԱՆ ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՐԵԱՆ

Այսօր, մեզի համար, ոչ միայն անհուն ուրախութիւն է, այլեւ՝ մեծ հպարտութիւն, որ մեր մէջ կը գտնուի բացառիկ անձնակազմը...

Պետք է ընդունիլ, որ Սփիւռքը, իր ելեւելներով, յարափոփոխութեամբ, զարգացումներով, շերտաւորումներով...

2) ՍՓԻՒՐԵԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՐՁԱՆ. վըստահաբար, այս ծիրէն ներս, գիրքերը կը դառնան տեսանելի...

3) ՍՓԻՒՐԵԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԲԱՂԱՎԱԳՈՒՄԻՆ ԵՐԵՎԱՆԻ. ուր մանրակրկիտ ու ճշգրիտ մէջբերումներով...

4) ՀԱՅՈՑ ԵՐԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹՂԱՍԾՐԱՐ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԱՊԱՆԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Այսօրյալսու շարժումներն է, որ Հայոց ցեղասպանութեան հաստատութիւնը...

Հեղինակը պատմագետի ու միջազգայնագետի պատասխանատուութեամբ...

5) ՀԱՅԱԿԱՆ ՍՓԻՒՐԵԻ ԻՐ ԱՐՄԱՏՆԵՐՈՒՆ ՀԱՐԱՄԱՆ ԱՆՎՈՒՄ ԳՍՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Անաստիկ ուրիշ արժեքներով փաթեթ մը, որ հեղինակին համար եղած է...

6) ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՐԵ ԿԱՍՏԱՆԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՍՐԻՉ ՈՒՇԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ՀԱՄԱՐԱԿԱՆ ԹԵՐԵՐՈՎ

Այս բաժինը կը կարեւորուի ու կը նշանակուի անով, որ թե՛ պետական վարչակարգը...

Յիշատիկը, ինչպէս սփիւռքահայերէն, նաեւ հայաստանցիներուն համար...

Սիրելի ներկաներ ու բարեկամներ, Գինեձևի այս գոյուրիկ, բայց բացառիկ պահը որքան ալ...

ՊԱՐՈՅՐ Զ. ԱՂԱՇԵԱՆ

Պէրյուք, 16 Ապրիլ 2024

Լիբանանահայ չորս մշակութային կազմակերպութիւններ (ԹՄՄ, Համազգային, Նոր Մերուր, ՀԲԸՄ-ՅԵԸ)



Անդրադառնալ Սփիւռքի բազմազուն պարագաներուն ու խայտաբղետ հանգոյցներուն...

Ի հարկէ, այդ պարագան կամ բացթողումին տեղ, թէ կողմ ոչ-լինի սփիւռքագիտական յաջգի համապատկերով...

Մեր համեստ կարծիքով, այս եռահատորները կրնան կազմել նաեւ համալսարանական լուսատու ու շինիչ աղբիւրներ...

Այս մտորումներու ու ուրուագծումներու լոյսին տակ, եթէ եռահատորը...

Այս հայուներէն, մտորումներէն ու յիշեցումներէն տեք, ուր արդէն Սփիւռքը հաստատելու շրջագիծը երեսն կու գայ...

1) ՀԱՅԱԿԱՆ ՍՓԻՒՐԵ ԳՍՏԱԿԱՆ, որ իր մէջ կը ներդրանակը հարուստ է ճոխ բովանդակութեամբ...

Իրեն վստահուած կառավարական դիրքը Սփիւռքի նախարարութիւնն էր, որ, վստահաբար, բոլորովին նոր աշխարհի մըն էր...

Սակայն, այն ինչ որ վիճակուած էր նորանկախ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարութեան...

Սակայն Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարութեան ղեկավարութեանը ընթացքին...

Դժբախտաբար, եռանդագին, երախտաշատ ու գործունէ տարերային Սփիւռքի նախարարութիւնը...

Հրանոյշ Յակոբեանը ՏԱՍԸ տարի դարձաւ ու մնաց Հայաստանի Սփիւռքի նախարարութեան վէճն ու բեմը...

Այսօր, ան արժանի հպարտութեամբ ու բուխ ոգեւորութեամբ, իր տասը տարուան փորձագիտութիւնը...

Այս տարածքը, որուն շնորհահանդեսին առիթով հաւաքուած ենք, անկասկած, գլուխ-գործոց մըն է, ի պատիւ, մէկ կողմէն՝ տասնամյակ Սփիւռքի նախարարութեան ճոխ...

Հրանոյշ Յակոբեանի այս՝ «հանրագիտարան»-ային մակարդակով, «հանրագիտակ» հրատարակութիւնները...

Որոշապէս, Հայաստանի Ակադեմիան, նկատի առնելով այս հրատարակութիւններուն այժմեականութիւնը...

Եռահատոր հրատարակութիւնները այնքան համապարփակ ու համաձոյն են, որ իրենց տեսակին մէջ կրնան նկատուիլ եզակի եւ իւրայատուկ հատորներ...

ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՐԱՆԱԶԳՈՒԹԻՒՆ

(Շարունակում Ա. Էջեն)

Նշենք, որ ՅՊԿ-ի նախագետը կես գիշերին յայտարարած էր իսրայելական թռչող սարք մը խոցելու մասին, անելցնելով որ անոր բեկորները չախախտուած են լիբանանեան հողի վրայ:

ՍՊԱՆԱԿԱՆ ՄՏԱՎԱԽՈՒԹԻՒՆ

Սպանիոյ արտաքին գործերու նախարար Մանուել Ալկարես Պուեոս մտավախութիւն յայտնեց Կազայի պատերազմը Լիբանանի ուղղութեամբ ընդարձակումին



հնարաւորութեան մասին, նկատի առնելով երկրին լարուած եւ անկայուն վիճակը: Ըստ նախարարին, երկու պետութիւններու լուծումին յանգելու համար պէտք է վերջնական ու անդամաւոր խաղաղութեան համաձայնութիւն կնքել, խուսափելով բռնութիւններու յաջորդական ալիքներէ: Սպանացի նախարարը պահանջեց նաեւ անյապաղ բանալ սահմանային բոլոր անցքերը՝ օգնութիւն փոխանցելու պաշարուած պաղեստինցիներուն:

ԳՈՅՈՒԹԵՆԱԿԱՆ ՎՏԱՆԳ

Լիբանանեան ուժեր կուսակցութեան նախագահ Սամիր Շաաժա մեկնաբար



նեց քաղաքապետական ընտրութիւնները յետաձգելու մտադրութիւնը եւ առաջարկեց ընտրութիւնը կատարել լիբանանեան բոլոր շրջաններուն մէջ, բացի հարաւէն եւ այնտեղ ուղղուիլ աւելի ուշ՝ իրավիճակը կայունացումէն ետք:

Անդրադառնալով տեղահանութեան թղթածրարին, Շաաժա յայտնեց, որ Լիբանանի ապաստանած սուրիացի տեղահանուածներուն հարցը երկրին համար գոյութենական ճակատագրական խնդիր մըն է: «Մենք չենք կրնար ձեռնածալ մնալ, դիտելով երկրին շարունակական փլուզումը», ըսաւ Շաաժա, խոստանալով ոչինչ խնայել՝ կանխելու համար իրավիճակը յաւելելու անկումը: Լիբանանեան ուժերու ղեկավարին համաձայն, Սուրիոյ մէջ այսօր իրաքանչիւր խաւի համար կայ ապրելու ապահով տարածք: «Իսլամիստները կրնան ուղղուիլ Իտիլի, իսկ նուազ ծայրայեղական ընդդիմադիրները հնարաւորութիւն ունին բնակելու երկրի հիւսիսային շրջանին մէջ: Կան նաեւ իշխանութիւններուն զօրակցող սուրիացիներ, որոնք կըրնան դիւրութեամբ իրենց տունները վերադառնալ՝ վարչակարգի տիրապետութեան տակ գտնուող շրջաններուն մէջ», բացատրեց Շաաժա: Ան սուրիացիներու տեղահանութեան հարցով իր կուսակցութիւնը քննադատողներուն հարց տուաւ, թէ անոնք ինչ ըրին, երբ կառավարութեան մէջ ունեին աւելի քան 10 նախարար եւ ընդարձակ հնարաւորութիւններ:

Գործող կառավարութեան մէջ գաղթականներու հարցերու նախարար Իսամ Շարաֆը տնտեսական ահազանգեց, թէ սուրիացիներ



րու գաղթականներուն մէջ կան բազմաթիւ զինեալներ, որոնք թիւը կրնայ հատել Նոյնիսկ քսան հազարը, որոնք պատրաստ են կռուելու: Խօսելով տեղահանութեան երեւոյթի վտանգաւորութեան մասին, նախարարի պաշտօնակատարը սուրիացիներու տունդարձին համար կարելորեց արտաքին լուծումները, ապա Միացեալ Նահանգներն ու Եւրոմիութիւնը ամբաստանեց տունդարձը խոչընդոտելու մէջ:

Հայ Կաթողիկէ Պատրիարքարան ՅԻՇԱՏԱԿ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ



ՀՍԿՈՒՄ

Երեքշաբթի, 23 Ապրիլ 2024-ին, երեկոյեան ժամը 8:00-ին
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի
Նահատակաց Յուշակոթողին շուրջ - Ժէիթաւով:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Նախագահութեամբ
Ն.Ա.Գ.Տ.Տ. ՈԱՖԱՅԷԼ ՊԵՏՐՈՍ Ի.Ա.
Կաթողիկոս Պատրիարքին Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2024-ին, երեկոյեան ժամը 5:00-ին,
«Ս. Գրիգոր Լուսաւորիչ» ճեմարանի բակին մէջ, ժէիթաւով:
Մասնակցութեամբ Հայ Կաթողիկէ ժողովրդապետութիւններուն,
միութիւններուն եւ վարժարաններուն:

Կը քարոզէ
Գերապայծառ Գաբրիէլ Թ. Վ. Սուրատեան
Ընդհանուր Փոխանորդ Պէյրութի Պատրիարքական Թեմին

Ս. Պատարագի աւարտին, հանդիսաւոր թափօրը կ'ուղղուի դէպի պատրիարքարանի բակը, ուր Նահատակաց Յուշակոթողին առջեւ պիտի կատարուի աղօթք:

Փոխադրամիջոցներ տրամադրուած պիտի ըլլան հետեւեալ կեդրոններուն մէջ կ.է. 4:00-ին,
- Մեսրոպեան Բարձրագոյն Վարժարան (Պուրճ Համուտ)
- Ս. Խաչ Հարպոյեան Բարձրագոյն Վարժարան (Չալքա)

Հայ ժողովուրդը իրաւորուած է
յարգանքի տուրքը մատուցանելու մեր բոլոր Նահատակներուն:

ՅԱԻԵԼԵԱԼ ՊԱՏՃԱՄԻՉՈՅՆԵՐ ԻՐԱՆԻ ԴԵՄ

(Շարունակում Ա. Էջեն)

միջազգային այլ կազմակերպութիւններու: «Սակայն, երբ Միացեալ Նահանգներ, Բրիտանիա եւ Ֆրանսա միջամտելով խափանեցին Ապահովութեան խորհուրդէն Իսրայէլը դատապարտող որոշումներու իրապարակումը, մենք ստիպուեցանք ռազմական միջոցներով հակադարձել», բացատրեց Քանանի՝ աւելցնելով,

անկայունութեան պատճառը Իսրայէլն է, որ կը շարունակէ յարձակիլ պաղեստինցիներուն վրայ: «Առանց ամերիկեան անսահման աջակցութեան, Իսրայէլի դեղին Իսրայէլը դատապարտող որոշումներու իրապարակումը, մենք ստիպուեցանք ռազմական միջոցներով հակադարձել», բացատրեց Քանանի՝ աւելցնելով,



որ Իրան թիրախաւորած է իսրայելեան զինուորական զորքեր: Իրանցի բանբերը նշեց, որ տարածաշրջանի

մեծագոյն իրագործումն է: «Առանց այլ կողմերու աջակցութեան, մենք հնարաւորութիւն պիտի ունենայինք կործանել Իրանի արձակած իրթիներուն 75 առ հարիւրը, իսկ մնացեալ 25 առ հարիւրը պիտի հասնէին իրենց թիրախներուն եւ ստեղծէին նոր իրողութիւն մը», ըսաւ Օլմարթ եւ գործնականօրէն հաստատեց, որ այլ երկիրներ եւ մասնակցած էին Իրանի իրթիները զսպելու աշխատակցին:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՈՂՐ. ԸՆԿ ՄՈՒՐՍ ՊՅԱՏԵԱՆԻ մահուան քառասունեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2024-ին, Նոր Հաճնոյ Սբ. Գեորգ եկեղեցոյ մէջ, յաւարտ Սբ. Պատարագի:

BOGHOS OPTIC
Autoroute Jdeideh,
Tel.: 01-870016

Նոր Մերուհա Մշակութային Միութիւն

ԱՐԵՓ

ՊԱՐԱԽՈՒՄԻ ԵԼՈՅԹԵՐ

31 ՄԱՅԻՍ - 1 ՅՈՒՆԻՍ - 2 ՅՈՒՆԻՍ

DANCE TROUPE **AREK**

Հովանաւորութեամբ՝
Ս.Գ.Կ. «Աղափ» մասնաճիւղի վարչութեան
Ս.Գ.Կ. «Ժիրար Մուրատ» մասնաճիւղի վարչութեան

Կազմակերպութեամբ՝
Հ.Մ.Մ. Պէյրութի Սկաւտական Խորհուրդին

ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Նուիրում Հայոց ցեղասպանութեան 109-ամեակին

Յայտագիր՝
Մասնակցութեամբ Հ.Մ.Մ. Պէյրութի Սկաւտական Խումբին
և փոխադրամիջոցներ
Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2024-ին,
Երեկոյեան ժամը 4:00-ին, Նոր Հաճն, Ս. Գեորգ եկեղեցոյ մօտ:

Հրաւեր

ARARAD DAILY NEWSPAPER
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أجنبية | المحبرة المسؤولة: أني صرافيان
تصدر عن شركة مسيعة للمباعة والنشر (ش.م.م.)